ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Դասարանական կոլեկտիվի ձևավորումը դասվարի կողմից
ԱՌԱՐԿԱ	Դասվար (Մայրենի, Մաթեմատիկա)
ՀԵՂԻՆԱԿ	Բաղդասարյան Արինե Մուշեղի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Քարաշենի միջնակարգ դպրոց <<ՊՈԱԿ>>

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդագյուլյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……..…3
2. Կոլեկտիվ հասկացության էությունը……..5
3. Դասվարի դերը սովորողների կենսադիրքի ձևավորման գործում……...9
4. Դասարանական կոլեկտիվի ձևավորումը դասվարի կողմից……13
5. Դասվարը որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար……15
6. Եզրակացություններ……18
7. Օգտագործած գրականության ցանկ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համակողմանիորեն ու ներդաշնակորեն զարգացած նոր մարդու անձնավորության և աշխարհայացքի ձևավորման ու դաստիարակության գործում դպրոցին պատկանում է կարևոր ու վճռական դեր: Այդ գործի հաջողությունը պայմանավորված է բազմաթիվ գործոնների ու հանգամանքների միասնական ազդեցությամբ, որը առաջին պլան է մղում նաև աշակերտին: Շատ կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր դպրոցականին բազմակողմանիորեն ճանաչելու հանգամանքը, նրա պահանջմունքներն ու հակումները, հետաքրքրություններն ու ընդունակությունները ժամանակին ի հայտ բերելը և նրա անձնավորության զարգացման պրոցեսը ճիշտ ծրագրելն ու կազմակերպելը: Եթե մանկավարժությունն ուզում է մարդուն դաստիարակել բոլոր կողմերով, ապա նա պետք է նախ ճանաչի նրան նույնպես բոլոր կողմերով: Երեխաները տարբերվում են իրենց խառնվածքի, հետաքրքրությունների, մտածողության, կամքի, բնավորության և այլնի անհատական գծերով: Մարդը ձևավորվում և դրսևորվում է գործունեության մեջ: Սովորողներին ակտիվ գործունեության մղելու, նրանց հետաքրքրությունների զարգացման բուն գործընթացն անհնարին է առանց աշակերտներին ճանաչելու և հաշվի առնելու անհատական առանձնահատուկ ձևերը: Դրանից բացի, աշակերտի հետ հաղորդակցվելը, նրա վրա ներգործություն ունենալը պահանջում են փոխադարձ մտերմություն, հոգևոր մերձեցում, վստահություն, համակրանք,հարգանք: Ուսուցչի համար գերնպատակ է դառնում.

1 համախմբել, ձևավորել դասարանական կոլեկտիվ,
2 ձևավորել սովորողների միջև ներդաշնակ, համերաշխ հարաբերություններ,
3 աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում,
4 սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ,
5 ապահովել դասարանի ընդհանուր զարգացվածության մակարդակը,
6 հասնել բոլոր աշակերտների գիտելիքների որակի բարձրացմանը,
7 պաշտպանել աշակերտների իրավունքներն ու շահերը,
8 ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ,

9 դաստիարակել հայրենասիրություն, հարգանք և հոգատարություն մեծերի նկատմամբ,

10 մշակել կուլտուրական վարքի հմտություններ՝ ճիշտ և գեղեցիկ դիմելաձև, խոսքի կուլտուրա:

Վերոնշյալ խնդիրներից ելնելով էլ պայմանավորված է հետազոտական **աշխատանքի թեմայի արդիականությունը**, քանի որ բոլոր ժամանակներում կոլեկտիվը կարևոր նախապայման է անձի սոցիալականացման գործընթացը, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելու համար:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել դասվարի դերը դասարանական կոլեկտիվի ձևավորման գործընթացում:

Աշխատանքի նպատակից ելնելով՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել գիտական գրականության մեջ կոլեկտիվին վերաբերող փաստերը,
- ուսումնասիրել կոլեկտիվի ձևավորման փուլերը, սկզբունքները, գործառույթները,
- ուսումնասիրել <<դասվար-աշակերտ>>, <<դասվար-ծնող>> հարբերությունները,
- բացահայտել դասվարի դերը սովորողների կենսադիրքի ձևավորման մեջ,
- բացահայտել դասվարի գործառույթները և նրա դերը աշակերտական կոլեկտիվի ձևավորման գործընթացում:

Հետազոտական աշխատանքում ներկայացված են աշակերտական կոլեկտիվի ձևավորման վերաբերյալ գիտական գրականության մեջ վերլուծված տեսական դրույթներ, ինչպես նաև պրակտիկ օրինակներ, որոնք օգտակար կլինեն մանկավարժներին՝ դասարանական կոլեկտիվ ձևավորելու գործընթացում:

ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ <<կոլեկտիվ>> հասկացությունը մեկնաբանվում է երկու իմաստով: Առաջինը՝ կոլեկտիվ ասելով հասկացվում է մարդկանց ցանկացած կազմակերպությունը, խումբը: Օրինակ՝ դասարանական, ուսանողական, աշխատանքային, մանկավարժական, մարզական, ընկերային և այլն: Երկրորդը՝ կոլեկտիվ ասելով հասկացվում է խմբի զարգացման բարձր մակարդակը, իհարկե, եթե այն միասնական է ու համախմբված և հետապնդում է կարևոր ու նշանակլից նպատակներ, շահեր:

Կոլեկտիվ ասելով՝ Մակարենկոն հասկանում է ոչ թե պատահական մարդկանց կուտակում, այլ նրանց միավորում՝ ընդհանուր աշխատանքով՝ մի ընդհանուր նպատակի հասնելու համար. լիազորությունների, պատասխանատվությունների որոշ համակարգով, այդ միավորման առանձին մասերի որոշ հարաբերակցությամբ և փոխադարձ կախվածությամբ[1]: Ըստ Մակարենկոյի՝ դպրոցական միասնական կոլեկտիվ ստեղծելով միայն, կարելի է մանկական գիտակցության մեջ արթնացնել հասարակական կարծիքի հզոր ուժը՝ իբրև կարգավորող և կարգապահություն հաստատող դաստիարակիչ գործոն: Կոլեկտիվում և կոլեկտիվի միջոցով դաստիարակության գաղափարը Մակարենկոյի մանկավարժական համակարգում կենտրոնական է: Նրա մանկավարժական համակարգի մեթոդաբանական հիմքը անձնավորության և հասարակության փոխհարաբերության հարցն է[2]:

«Կոլեկտիվի շարժման օրենքը» Մակարենկոն համարում էր կոլեկտիվի կարևորագույն օրենքներից մեկը: Ըստ Մակարենկոյի, եթե կոլեկտիվը հասնում է առաջադրված նպատակին, սակայն իր առջև նոր նպատակներ չի դնում, երբ չկան այնպիսի ձգտումներ, որոնք կոգեշնչեն կոլեկտիվի անդամներին, ապա այդպիսի կոլեկտիվը ապագա չունի. դրա զարգացումը կանգ է առնում:

Մանկական կոլեկտիվի զարգացումն ըստ Մակարենկոյի՝ պետք է անընդհատ լինի: Այն պետք է ուղղություն ստանա այնպիսի մանկավարժական կոլեկտիվի կողմից,

---

[1] Галагузовой М., Гуманит М., социальной педагогики, Хрестоматия-учеб.: Учеб. пособие., изд. центр ВЛАДОС, 2000, стр. 392.

[2] Коджаспирова Г., История образования и педагогической мысли: Таблицы, схемы, опорные конспекты: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений.-М Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2003, стр. 162.

որը ստեղծագործաբար որոնում է նրա առաջխաղացման առավել արդյունավետ ուղիները:

Կոլեկտիվը պետք է մշտապես ապրի լարված կյանքով, որոշակի նպատակի ձգտումով: Դրան համապատասխան՝ Մակարենկոն առաջին անգամ մանկավարժության մեջ առաջ քաշեց և մշակեց մի կարևոր սկզբունք, որն անվանեց «հեռանկարային գծերի համակարգ»:

Դպրոցական կոլեկտիվը հետապնդում է նպատակներ, շահեր և համախմբվում՝ դրանք իրականացնելու համար: Այն կոլեկտիվն է իր առջև դրված խնդիրները իրագործում, որի անդամները նորմալ փոխհարաբերությունների մեջ են գտնվում, ուր ենթարկելն ու ենթարկվելը դառնում են կոլեկտիվի կյանքի օրինաչափությունները, ուր յուրաքանչյուր մեծ ու փոքր գործի համար բոլորը պարտավորված եմ զգում իրենց, պատասխանատվության զգացում ունեն ու առաջնորդվում են դեմոկրատիայի սկզբունքներով: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ աշակերտական կոլեկտիվ է կոչվում դպրոցականների այն խումբը, որն ունի հասարակայնորեն արժեքավոր, միասնական նպատակներ, որոնց հասնելու համար տվյալ խմբի անդամները կազմակերպում են համատեղ գործունեություն ու մտնում փոխադարձ կախվածության և պատասխանատվության որոշակի հարաբերությունների մեջ՝ կոլեկտիվի առջև բոլոր անդամների իրավունքների ու պարտականությունների անվերապահ հավասարության պայմաններում[3]:

Դասարանական կոլեկտիվը մեկուսացված չէ: Այն իր ընդհանրությամբ ու կազմակերպմամբ կապված է նույն դպրոցի կամ այլ դպրոցների կոլեկտիվների հետ: Աշակերտական կոլեկտիվներում առաջանում են տարբեր միավորումներ ըստ հետաքրքրությունների, նախասիրությունների, ըստ համատեղ գործունեության և այլն: Կոլեկտիվում հաղորդակցման միջոցով զարգանում է միաջանձնային հարաբերությունները: Այս ընթացքում կոլեկտիվը ստանում է կեսնագործունեության իր ներքին սուբյեկտիվ կողմը և հանդես է գալիս որպես սոցիալական երևույթ:

Ժամանակակից երեխան այսօր մի քանի կոլեկտիվների անդամ է: Այդ են վկայում նրա ունեցած կապերը այլ կոլեկտիվների հետ: Դա են վկայում նրա կողմից իրականացվող տեղեկատվությունը և միավորումը: Նա մի կողմից մի շարք

[3] Ամիրջանյան Յու., Մանկվարժություն, Մանկավարժ, 2005, էջ 305:

կոլետիվներից ստացած տեղեկատվության սուբյեկտ է, մյուս կողմից՝ կոլեկտիվներին ինտեգրողը:

Կոլեկտիվ չի կարելի համարել օրինազանցների, գողերի խմբավորումները, քանի որ նրանց հետապնդած մտքերն ու շահերը հակահասարակական են, հակամարդկային ու հակաօրինական: Նրանց խմբերը կարող են թվալ բավական ամուր ու միասնական, սակայն հաշվի առնելով, որ հետապնդում են միայն հասարակությանը վնաս պատճառելու նպատակ, իսկ դրանք հենց ինքը հասարակությունը չի ընդունում, բնական է, որ նման խմբավորումները կոլեկտիվ համարել մենք պարզապես չենք կարող:

Կոլեկտիվի գործունեության և զարգացման դրդապատճառները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Դրանց շարքերում կարևորվորմ են հատկապես աշխատանքը, դիդակտիկ, մտավոր, տրամաբանական, սյուժետային և այլ խաղերը, զվարճությունները, գրական ընթերցանությունները, դրամատիկ բեմադրությունները, ինքնագործունեության տեսակները և այլն:

Մանկավարժ գիտնականները գտնում են, որ կոլեկտիվի զարգացման, բարգավաճման համար մեծ նշանակություն ունեն կոլեկտիվի կառուցվածքը և նրա մարմինները: Դպրոցում սովորողների թիվը միջինում հասնում է 400-500 հոգու: Այս ընդհանուր թիվը չի կարող անմիջական ազդեցություն ունենալ յուաքանչյուր անձի վրա: Անմիջական ազդեցություն ունենալ յուաքանչյուր անձի վրա կարող է ունենալ սկզբնական կոլեկտիվը, տվյալ դեպքում՝ դասարանական կոլեկտիվը[4]:

Կան տարբեր տեսակի սկզբնական կոլեկտիվներ: Օրինակ՝ դպրոցներում կան նաև այլ սկզբնական կոլեկտիվներ, օրինակ՝ ֆակուլտատիվ խմբերը, արտադասարանային խմբակները, մարզական սեկցիաները և այլն: Կան նաև մշտական և ժամանակավոր կոլեկտիվներ, որոնց աշխատանքը պետք է զուգակցվի: Միայն այս դեպքում նրա ազդեցությունը անձի վրա կլինի միասնական և հետևապես՝ դաստիարակությունն էլ կլինի արդյունավետ: Սկզբնական կոլեկտիվներում կարող են լինել ինչպես նույն տարիքի, այնպես էլ տարբեր տարիքային խմբի պատկանող երեխաներ: Սակայն կարևորը այն է, որ նրանք կարողանան լուծել ոչ միայն գործնական, այլ նաև ուսումնադաստիարակչական խնդիրներ:

[4] Բալասանյան Ս., Մակարենկոն և Սխոմլինսկին երեխաների կոլեկտիվի ստեղծման մասին, Երևան, 1983, էջ 29:

Մանկական կոլեկտիվն իր գործառույթների իրականացման համար պետք է ունենա իր մարմինները, առանց որոնք պարզապես չի կարողանա կորդինացնել իր աշխատանքները և լուծել այս կամ այն խնդիրը: Մանկական կոլեկտիվի գլխավոր մարմինը դաստիարակվողների ժողովն է, որը զբաղվում է ուսումնադաստիարակչական հարցերով:

Հաջորդ մարմինն ակտիվն է: Սրա մեջ կարելի է դասել դասարանի խմբագրական կոլեգիան, առողջապահական խումբը, որոնց գործունեությունը կորդինացնում է ավագը: Ավագը ևս մարմին է, քանի որ իրականացնում է որոշակի գործառնություններ:

Դպրոցում զանազան տիպի միջոցառումների կազմակերպման և իրականացման համար կազմավորվում են ժամանակավոր մարմիններ՝ շտաբներ, խորհուրդներ և այլն: Ժամանակավոր մարմինների մեջ են մտնում սկզբնական կոլեկտիվի կողմից երաշխավորված աշակերտները: Որոշակի միջացառման կազմակերպման համար նրանց հանձնարարվում է կազմել այդ միջոցառման պլանը, որի կազմմանը մասնակցում են դասարանի դասղեկը, ով կատարվելիք աշխատանքները բաժանում է ըստ աշակարտների: Ընդհանուր աշխատանքները ղեկավարում ու իրականացնում են ժամանակավոր մարմինները, ընդ որում հանձնարարությունները լինում են կոնկրետ ու խիստ որոշակի: Օրինակ, թե ինչ պետք է կատարի այս կամ այն աշակերտը, ով ընդգրկված է ժամանակավոր մարմնի մեջ, կամ ղեկավարող կազմի մեջ մտնող այս կամ այն անձը ինչ է ղեկավարելու և այլն[5]:

Միջոցառման կայանալուց հետը բոլոր մասնակիցները կրկին հանդիպում են և դաստիարակի միջնորդությամբ քննարկում են ստացված արդյունքները, ապա ներկայացնում են հաշվետվություն: Ա. Մակարենկոն բարձր է գնահատել կոլեկտիվի ակտիվի դերը: Նա ակտիվը համարում էր կազմակերպող կենտրոն, սկզբնական կոլեկտիվի միջուկ: Նա շեշտում էր, որ պետք է իմանալ, որ ակտիվն է պահպանում սկզբնական կոլեկտիվի ավանդույթները, թելադրում աշխատանքի ոճը, գործելակերպը, կառավարումը: Կոլեկտիվի անդամներին ընտրելիս ընտրվում են այն աշակերտները, ովքեր գործունյա են, բարեխիղճ են, պատասխանատու ու պարտաճանաչ են, ունեն կազմակերպչական ջիղ ու վայելում են հարգանք

[5] Ամիրջանյան Յու., Մանկվարժություն, Մանկավարժ, 2005, էջ 308:

շրջապատում: Սակայն սա չի նշանակում, որ դաստիարակը ոչինչ չի անում: Նրա անմիջական միջնորդությամբ են կատարվում ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքները:

2. Դասվարի դերը սովորողների կենսադիրքի ձևավորման գործում

Կրտսեր դպրոցական տարիքում միջանձնային հարաբերությունները մեծամասամբ սահմանափակվում են ուսումնական գործունեությամբ: Այդ տարիքից նրանք սկսում են ընկերներ ձեռք բերել: Աշակերտը ներգրավվում է սոցիալական հարաբերությունների նոր ոլորտի մեջ, փոխվում է նրա դիրքը, նա ձեռք է բերում նոր իրավունքներ ու պարտավորություններ, ընդլայնվում է միջանձնային շփումների շրջանակը: Այստեղ կարևոր է հատկապես ուսուցչի դերը, որը հանդես է գալիս որպես բացառիկ ռեֆերենտային անձնավորություն: Նրա համար յուրահատուկ ոլորտ է դառնում դասարանական կոլեկտիվը, որը զգալիորեն ներգործում է երեխաների սոցիալական հաղորդակցման կարողությունների ձևավորման վրա: Այստեղ երեխաներն իրենց համար նոր տիպի հարաբերություններ են հաստատում՝ ելնելով նոր, իր բովանդակությամբ նախկին կարգավիճակներից տարբեր՝ դպրոցականի կարգավիճակից: Դասարանական կոլեկտիվում երեխան հասարակական հարաբերությունների փորձ է ձեռք բերում, նրա մոտ աստիճանաբար սկսում են ձևավորվել այնպիսի սոցիալ-հոգեբանական հատկություններ՝ ինչպիսին սիրալիրությունն է, այլ մարդուն հասկանալու կարողությունը, նրա հետ փոխներգործունեության մեջ մտնելու ունակությունը: Զարգանում են երեխայի զգացմունքները, հուզական արձագանքման կարողությունները, ինքնավերահսկողությունը: Երեխան աստիճանաբար կարողանում է գիտակցել իր հոգեվիճակները, դրդապատճառները, վերաբերմունքը: Նա նաև սկսում է իրեն գիտակցել որպես միջանձնային հարաբերությունների սուբյեկտ, հասկանում է, որ ընդգրկված է սոցիալական հարաբերությունների որոշակի համակարգում, որտեղ իրենից պահանջվում են շատ կոնկրետ վարքային դրսևորումներ:

Օրինակ՝ առաջին դասարանցիները դեռևս իրենց կոլեկտիվի մաս չեն զգում: Նրանք եսակենտրոն են, գործում են միմյանցից անջատ և անկախ: Նրանց համար առաջնային

խնդիր է հանդիսանում դպրոցական պարտականությունների լավ կատարումը։ Այնուամենայնիվ, երեխան կարողանում է օգնել դժվար վիճակում հայտնված հասակակցին, ինքն էլ օգնություն խնդրել։ Սովորաբար այդ տարիքում, օգնության համար դիմում են այն երեխային, ում գովել է ուսուցիչը։

Երկրորդ դասարանում ձևավորվում են նախադրյալներ ավելի լայն սոցիալական շփումների համար, աստիճանաբար սկսում են գնահատվել համադասարանցիների անձնային որակները, հարաբերությունները կառուցվում են դրանց նկատմամբ վերաբերմունքի հիման վրա։

Երրորդ դասարանում կարելի է փաստել, որ անցում է կատարվում միջանձնային շփումների նոր մակարդակի։ Եթե նախկինում երեխայի համար միևնույն էր , թե ուսուցիչը նկատողություն կանի հասակակիցների ներկայությամբ կամ բացակայությամբ, ապա երրորդ դասարանում հրապարակային նկատողությունը ավելի է խոցում երեխային, նրա հուզական բարեհարմարության վրա ազդում են ոչ միայն մեծահասակի, այլև հասակակիցների կարծիքներն ու վերաբերմունքը։ Մենք պետք է նման անհարմարությունից զերծ պահենք նրանց։ Նրանք ձգտում են շփվելու, մեկը մյուսի հետ, տարբեր տեսակի հարաբերություններ հաստատելու՝ անձնային, ուսումնական, գործնական։

Չորրորդ դասարանում ուսուցիչը (դասվարը) տեսնում է, որ երեխաների շփման դրդապատճառները դուրս են գալիս ուսումնական գործունեության շրջանակներից։ Նրանց մոտ ձևավորվում է ընկերոջ հանդեպ ուշադրություն, անշահախնդրություն, դասարանական կոլեկտիվում ամբողջապես փոխվում է աշակերտի բարոյական կերպարը։ Առանձնանում են «հեղինակությունները» (բարձր ընդունակություններ ունեցողները) և «հեղինակությամբ չփայլող» (թույլ կարողություններով) երեխաները։

Հասակակիցների կողմից երեխաների՝ մեկը մյուսին, ընդունելու նշանակալի գործոններից է նաև ուսուցչի կողմից տրվող հետադարձ կապը։ Կոլեկտիվում բարձր կարգավիճակ են ձեռք բերում սովորաբար այն երեխաները , որոնք ամենից հաճախ են արժանանում ուսուցչի գովեստներին։ Պատժվող երեխաներին մյուսները չեն սիրում։ Կրտսեր դպրոցականի կոլեկտիվում աշակերտների համար կարևորագույն չափանիշ է դասվարի խոսքը, վերբերմունքը, կեցվածքը։ Երբեմն ուսուցչի հեղինակությունն ավելի ուժեղ է լինում, քան ծնողներինը, ուսուցչի կարծիքն ու

վերաբերմունքը առաջատար նշանակություն է ձեռք բերում: Նրանք քիչ ուշադրություն են դարձնում հասակակիցների վրա, նրանց ավելի շատ հետաքրքրում է ուսուցիչը, նրա վերաբերմունքը իրենց կամ մեկ ուրիշի նկատմամբ, ցանկանում են ինչ-որ բանով առանձնանալ մյուսներից և տպավորություն գործել ուսուցչի վրա: Աշակերտների բոլոր գործողությունների հիմքում ընկած է ուսուցչի հավանություն ստանալը: Անգամ արդեն ձևավորված դասարանական կոլեկտիվում երեխաների համար կենտրոնականը ուսուցչի ուշադրությունն իրենց կողմը գրավելն է:

Այդ տարիքում մանկավարժը (դասվարը)՝ օգտագործելով մանկավարժական փորձն ու գիտելիքները, ոչ միայն գիտելիքներ է հաղորդում, այլև նպաստում է երեխայի հարմարմանն ու ինտեգրացիային՝ նոր միջավայրում: Մենք՝ դասվարներս, աշխատանքներ ենք տանում կոլեկտիվի համախմբվածության հետագա զարգացման ուղղությամբ, նպաստում աշակերտների միջև ընկերական հարաբերությունների զարգացմանը: Ուսումնական հաջողություններն ու ուսուցչի հավասար ուշադրությունը բոլորի նկատմամբ նպաստում է երեխաների միմյանց դրական վերաբերմունքին ու հարաբերություններին: Անհատական մոտեցում ենք ցուցաբերում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, խրախուսում ենք նրանց ջանքերը: Համատեղ աշխատանք ենք տանում նաև ծնողների հետ՝ բացահայտելու և զարգացնելու երեխայի ընդունակություններն ու կարողությունները, որովհետև ընդունակությունների զարգացումը նպաստում է նրանց ակտիվությանն ու ինքնաարտահայտմանը:

Դասարանական կոլեկտիվում չպետք է աշակերտները բաժանվեն «սիրելիների» և «ոչ սիրելիների»:Որոշ դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաճախ աշակերտների կոպիտ վերաբերմունքը ուսուցչի նկատմամբ պայմանավորված է ուսուցչի սխալ մանկավարժական գործելակերպով, որովհետև անտեսում է սովորողների անհատականությունը, անձնային որակները: Եթե երեխան բորբոքված վիճակում է, պետք է զգույշ լինել: Նման դեպքերում նա կարող է դուրս գալ սահմաններից: Դասվարը, իմանալով աշակերտների անհատական առանձնահատկությունները՝ ընտրում է գործելու որոշ ձև և վարպետորեն կիրառում: Նման դեպքերում ուսուցիչը կարողանում է արագ վերացնել հակադրությունները և հեշտ է ղեկավարում դասարանական կոլեկտիվը:

Նրա խրախուսանքը սաների մեջ առաջացնում է դրական ապրումներ, հպարտության զգացում, ավելի լավը դառնալու ցանկություն։ Երբեք չպետք է գերագնահատել կամ թերագնահատել սովորողների ուժերը, կարողություններն ու հնարավորությունները։ «Վատ» աշակերտին պատժելու միտքը զարգացնելու փոխարեն, ուսուցիչը պետք է աշխատի տեսնել երեխայի մեջ լավը և վերջինիս օգնությամբ ստեղծի նորը՝ հնից հրաժարվելու նպատակով։

Յուրաքանչյուր աշակերտ քիչ թե շատ եռանդով ձգտում է կոլեկտիվում ինքնահաստատվելու, նրանում նպաստավոր դիրք գրավելու։ Բայց ոչ բոլորին է հաջողվում իր բնական կարողությունների շնորհիվ հասնել տեսանելի հաջողությունների, հաղթահարել ամաչկոտությունը, քննադատաբար ըմբռնել կոլեկտիվի հետ արժեքային կողմնորոշումների տարբերությունները։ Հատկապես կրտսեր դպրոցականների համար, ովքեր դեռևս չեն զարգացրել ինքնագիտակցությունն ու ինքնագնահատականը, ընկերների վերաբերմունքն իրենց նկատմամբ ճիշտ գնահատելու կարողությունը, կոլեկտիվում գտնել այն տեղը,որը, կհամապատասխանի հնարավորություններին, նրանց կդարձնի հետաքրքիր մարդիկ՝ ընկերների աչքում՝ ուշադրության արժանանալով։ Դպրոցականները՝ որպես կոլեկտիվի (թիմի) անդամներ, տարբերվում են միմյանցից իրենց առողջական վիճակով արտաքին տեսքով, բնավորության գծերով, մարդամոտության աստիճանով, գիտելիքներով, հմտություններով և շատ այլ հատկանիշներով ու որակներով։ Դրա համար էլ նրանք տարբեր կերպ են մտնում կոլեկտիվ հարաբերությունների համակարգ, անհավասար արձագանք են առաջացնում ընկերների մոտ, հակառակ ազդեցություն են ունենում կոլեկտիվի վրա։ Դասարանական կոլեկտիվը ձևավորելիս՝ մենք արդյունավետության ենք հասնում միայն այն ժամանակ,երբ սերտ ու մշտական կապ ենք պահպանում և համագործակցում ընտանիքի հետ։

Եվ վերջապես դասարանական կոլեկտիվը նման է մեծ և ընկերասեր ընտանիքի, որտեղ կա փոխադաձ օգնություն, ընկերասիրություն, վստահություն, սեր, ջերմություն։ Փոխադարձ վստահության և հարգանքի, աջակցության և օգնության, միմյանց հանդեպ համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքները պետք է լինեն ընտանիքի և դասարանի ուսուցչի համագործակցության հիմքում։

3. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՍՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ

Կրտսեր դպրոցական տարիքում դասվարը կանոնակարգում է ներդասարանական փոխհարաբերությունները, խթանում է առաջնորդության դրսևորումները, ձևավորում պատասխանատվության, փոխօգնության, համագործակցության ոգի: Կարևորում է կոլեկտիվ ստեղծագործական գործունեության ձևավորումը և դրա կիրառումը ինչպես կրթական գործունեության մեջ, այնպես էլ դրանից դուրս: Դասարանական կոլեկտիվի ձևավորումը նպաստում է անհատի ձևավորմանը: Երեխայի անձնավորության զարգացումը ընթանում է կոլեկտիվում: Այստեղ են միմիայն ստեղծվում բարենպաստ պայմաններ ձևավորող անձնավորության դրսևորման ու հարստացման համար: Մարդը ձևավորվում և դրսևորվում է գործունեության մեջ: Յուրաքանչյու երեխայի ակտիվ գործունեության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է նրա մեջ առաջացնել հետաքրքրություններ: Երեխաներին ակտիվ գործունեության մղելու, նրանց հետաքրքրությունների զարգացման բուն պրոցեսն անհնարին է, առանց նրանց ճանաչելու և հաշվի առնելու անհատական առանձնահատուկ ձևերը: Անհատական մոտեցումը կիրառվում է առաջին հերթին ծույլ, ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների նկատմամբ, և դրանով ուսուցիչը ձգտում է վերացնել նրա բնավորության մեջ եղած բացասական գծերը:

Մենք՝ ուսուցիչներս, երեխաների կրթության, դաստիարակության, որպես անհատի ձևավորման անընդհատ կապի մեջ ենք ծնողների հետ: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակաուղղված և երկարատև աշխատանքի արդյունք է: Երբ մենք ծնողին ներգրավում ենք երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի ձեռքբերումներ է ունենում: Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է նաև մեզ:

Կրտսեր դպրոցական տարիքը երեխաների համար մեծ փոփոխությունների ժամանակաշրջան է: Նրանք մտնում են նոր միջավայր, ուզում են ինքնահաստատվել և իրենց տեղը գտնել կոլեկտիվում: Դպրոցական կոլեկտիվում՝ նրանք մտնում են տարաբնույթ հարաբերությունների մեջ՝ հասակակիցների, ինչպես նաև ուսուցիչների հետ, կատարելագործում են իրենց արժեհամակարգը: Այդ շրջանում նրանց համար

չափազանց կարևոր է ցանկացած կարծիք: Հաճախ մենք նկատում ենք, որ դպրոցական կոլեկտիվներում առաջանում են խմբեր, որոնք թիրախավորում են իրենց հասակակիցներին՝ վնասելու, նսեմացնելու, ահաբեկելու՝ փորձելով անձնական դիրք հաստատել տվյալ խմբում: Դա հիմնականում արտահայտվում է ծաղրի, վիրավորանքի, արհամարհանքի տեսքով: Կարևոր պայմանը, որը կնպաստի աշակերտի կարգավիճակի փոփոխմանը դասարանում, դա ուսուցչի կողմից այնպիսի խմբային աշխատանքների կազմակերպումն է, որոնք կփոխեն մանկական կոլեկտիվի անդամների գործառույթներն ու պարտականությունները: Դրան կարող են նպաստել հաջողությունները սպորտային միջոցառումներում, մշակութային կենտրոններում:

Այսպիսով, դպրոցական կոլեկտիվում սիրալիր, առողջ հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն երեխայի անձի ներդաշնակ, բնականոն զարգացման համար, իսկ ընկերական շրջապատի բացակայությունը կարող է նրանց բազում դժվարություններ պատճառել կյանքում: Դրա համար ուսուցիչը պետք է իմանա յուրաքանչյուր աշակերտի կյանքի պայմանները, բնավորությունը, տրամադրությունը, հաշվի առնի նրա դերը ընտանիքում,հասակակիցների շրջապատում, նրա համակրանքները և հակակրանքները: Լավ կոլեկտիվի պայմաններից է միասնական աշխատանքը:

Այստեղ են ձևավորվում արժեքային համակարգը, բնավորության գծերը, ինչպես նաև հասարակության սոցիալական խմբերի և տարբեր շերտերի մարդկանց հետ շփվելու կարողությունները, ինչը նրան օգնում է դիմակայելու կյանքի դժվարություններին և ճիշտ կողմնորոշվել ստեղծվա բարդ իրավիճակներում, ինչպես նաև փոխհարաբերություններ ունենալ շրջապատի մարդկանց հետ: Աշակերտը հանդիսանում է դասարանական կոլեկտիվի կարևոր մասը: Երբ նա գիտակցում է, որ համադասարանցիներն մշտապես զգում են իր կարիքը, երբ դասարանը հետաքրքրվում է իրենով, իր հետաքրքրություններով, ապրումներով, բարձրանում է նրա ինքնագնահատականը: Այդ միջավայրում աշակերտն իրեն զգում է անկաշկանդ, ունենում է ստեղծագործելու, գործունեություն ծավալելու կարիք, գիտակցում է շրջապատի մարդկանց կարևորությունն իր կյանքում:

Դասարանական կոլեկտիվում ուսուցիչը մշտապես առաջնորդվում է արդարության և հավասարության սկզբունքներով՝ նպաստելով, որ յուրաքանչյուր աշակերտ

դասարանում իրեն զգա կարողունակ, պիտանի, դրսևորի իր ձգտումները և կարողանա հասնել հաջողությունների: Եվ այդ ժամանակ աշակերտները համոզված են լինում, որ համադասարանցիները ևս մտահոգված են և ամեն ինչ անում են, որ իրենք նույնպես ունենան հաջողություններ, բոլորը միասին վայելեն այդ ձեռքբերումների բերկրանքը: Աշակերտը անկրկնելի անհատականություն է: Մենք պետք է ուսումնասիրենք և բազմակողմանի ճանաչենք նրան՝ որպես անհատի, նրա անձնային որակները:

4. ԴԱՍՎԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՂԵԿԱՎԱՐ

Դասվարը պետք է կատարի հատուկ պահանջներ ու պարտականություններ՝ որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար:

Դասվարի դիտողականության, ճանաչողական ու առհասարակ մանկավարժական, հոգեբանական գիտելիքների նշանակությունը շատ մեծ է: Նա հնարվորություն է տալիս և օգնում է ուսուցչին թափանցելու աշակերտի ներաշխարհ, իմանալու երեխայի վերաբերմունքի ու արարքների մոտիվները և արտահայտությունների հոգեբանական ենթատեքստերը: Այդ ամենի համար նա նաև պետք է իմանա յուրաքանչյուր աշակերտի կյանքի պայմանները, բնավորությունը, տրամադրությունը, հաշվի առնի նրա դերը ընտանիքում և հասակակիցների շրջապատում, նրա համակրանքները և հակակրանքները, որպեսզի երբ երեխայի վարքագծի մեջ բաներ փոխվեն ավելի հեշտ և շուտ կարողանա դրանք հայտնաբերել, պարզաբանել պատճառները, և կարողանա կանխել մոտալուտ վտանգը [6]:

Դասվարը, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար.

1. դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ,
2. նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ,

[6] Մելքոնյան Տ., Ուսուցիչ-աշակերտ ժամանակակից փոխհարաբերությունները և առաջացող խնդիրները, Հոդված, 2017, էջ 2:

3. անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,
4. իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն,
5. կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ,
6. հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը,
7. արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

Դասվարը, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար, կազմում է իր աշխատանքային պլանը, որով էլ հենց առաջնորդվում է դասարանի կառավարման և դասապրոցեսի կազմակերպան ժամանակ: Այն կազմելիս դասվարը պետք է՝ ներկայացնի դասարանի ընդհանուր բնութագիրը՝

1. աշակերտների ընդհանուր քանակը (աղջիկ, տղա)
2. աշակերտների և նրանց ընտանիքների սոցիալական վիճակը,
3. տվյալներ նրանց առողջության և ֆիզիկական զարգացման մասին,
4. ճանաչողական հմտություններ (ուշադրության, հիշողության, պատկերացման, մտածողության առանձնահատկություններ),
5. զգացմունքակամային և պահանջարկամոտիվացիոն շրջանակներ (անհատի ուղղվածությունը, հետաքրքրությունները, հարաբերությունները, արժեքային համակարգը),
6. աշակերտների վարքը, արարքները:
7. աշակերտների գիտելիքների մակարդակը,

8. հոգեբանական և սոցիալական զարգացման մակարդակը, որը համապատասխանում է ուսումնադաստիարակչական գործընթացի երեք ֆունկցիաներին. ուսուցանող, դաստիարակող և զարգացնող:

Դասվարը ուսումնասիրում է դասարանը՝ որպես խումբ, կոլեկտիվ.

1. Դասարանում միջանձնային հարաբերությունները, համախմբվածությունը, հասարակական կարծիքը, արժեքների միասնականությունը և այլն…
2. Հարցաթերթերի և այլ հարցման մեթոդների միջոցով հնարավոր է հավաքագրել տարբեր տեղեկություններ՝ աշակերտների գործունեության դրդապատճառների, անհատական որակների և արժեքային կողմնորոշումների մասին:

Դասվարը, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար, պետք է օժտված լինի հետևյալ գծերով՝

1. Դասվարի բարեկրթության չափանիշ է հանդիսանում նրբանկատությունը, ի հակադրություն կոպտության, աննրբանկատության:
2. Դասվարը պետք է լինի խիստ, բայց բարի և անաչառ:
3. Եթե դասվարն ուզում է, որ իրեն հարգեն,առաջին հերթին ինքը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը:
4. Նախքան ուրիշներից ուշադրություն պահանջելը, դասվարն ինքը պետք է ուշադիր լինի իրեն շրջապատողների հանդեպ, հասկանա նրանց շահերը, կարիքներն ու պահանջները:

Դասվարը, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար, պետք է ունենա՝

1. Ներքին ազատություն,
2. Մտածելակերպի, վարքի ազատ ընտրություն,
3. Սեփական արարքների հնարավոր հետևանքների համար լիարժեք պատասխանատվության գիտակցում,

Դասվարը, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար, պետք է կարողանա՝

1. Պլանավորել իր մասնագիտական գործունեությունը,
2. Վերլուծել և կանխատեսել իր գործունեության արդյունքները,
3. Աջակցել յուրաքանչյուր աշակերտի՝ որպես անհատ ձևավորմանը,
4. Աշակերտներին սովորեցնել վերլուծել իրենց արտաուսումնական գործունեությունը,

5. Կապեր հաստատել աշակերտների ծնողների, առարկայական ուսուցիչների և հասարակության հետ:

Դասվարը, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար, երեխաների հետ շփման մեջ պետք է կարևորի բարությունը, ուշադրությունը, հոգատարությունը, իրենց հասկանալը, կարեկից, արձագանքող վերաբերմունքը, շփման համար բաց լինելը, բարեհամբույր լինելը, պատասխանատվությունը, մարդասիրությունը, անկեղծությունը, հումորի զգացումը, լրջությունը, հավասարակշռվածությունը, արդարամտությունը, նպատակասլացությունը, ժամանակակից լինելը:

Դասվարը, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավար, ծնողների հետ շփման մեջ պետք է կարևորի ազնվությունն ու արդարամտությունը, համբերատար լինելը, հանգստությունը, բարեկրթությունը, նրբանկատությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքի կատարման արդյունքում բացահայտվեցին՝

1. կոլեկտիվ հասկացության հիմնական բովանդակությունը, ձևավորման փուլերը, սկզբունքները, գործառույթները,
2. մանկավարժական գործընթացում դասարանական կոլեկտիվի ձևավորման ժամանակ առաջացող խնդրահարույց իրավիճակները՝ կապված դասավանդման ժամանակ առաջացող բարդությունների հետ,
3. դասվարի ազդեցությունը երեխայի կենսադիրքի ապահովման գործում,
4. դասվարի, որպես դասարանական կոլեկտիվի ղեկավարի, ներկայացվող մանկավարժական պահանջները ու նրա գործառույթները,
5. դասվար-աշակերտ, դասվար-ծնող փոխհարաբերությունների ձևերը:

Այսպիսով, դասվարի կողմից դասարանական կոլեկտիվի ձևավորման մանկավարժական պայմաններն են.

1. աշակերտին շրջապատող ճիշտ միջավայրի կազմակերպումը ուսուցման և դաստիարակության կարևոր խնդիր գիտակցելը, ինչպես նաև որպես անհատականության ձևավորման միջոցներից մեկն ընդունելը,

2. ավագների և աշակերտների համատեղ ակտիվություն ապահովելու նպատակով ընտանիքում և դպրոցում հումանացված միկրոսոցիալական միջավայրի ստեղծումը (հումանիստական հարաբերություններ, շփում, հոգեբանական առողջ մթնոլորտ, միասնական ստեղծագործական, աշխատանքային գործունեություն և այլն),
3. դաստիարակչական սուբյեկտների փոխգործունեության, հանդուրժողականության և ուսումնական հաստատությունում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի, հարմարավետության հաստատումը,
4. դպրոցում և ընտանիքում շփման բարձր և առողջ մակարդակի ապահովում և ազատ շփման, փողոցի ազդեցության չեզոքացման մանկավարժական վարպետության առկայությունը (ինչքան մեծանում է մարդը, այնքան մեծանում է նրա շրջապատը): Մարդու հոգեբանական զարգացումը (կրթությունը, արժեքները, նորմերը, սովորությունները, վարվելակերպը), նրա ամբողջ կյանքի ոճը կախված է նրա շփման աստիճանից, շրջապատի մեծությունից: Եվ որքան շատ է շփվում մարդը, այնքան շատ բան է իմանում իր մասին, այնքան պատրաստ է համագործակցության, ինքնավստահ է դառնում, որն ավելի մեծ տարիքում վերածվում է ինքնագնահատման:
5. երեխայի մեջ անձնային այնպիսի որակների ձևավորումը, որոնց շնորհիվ ընդունակ լինեն դիմակայել ոչ միայն սոցիալական շրջապատի բացասական ազդեցություններին, այլև այն փոխելուն:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Մանկվարժություն, Մանկավարժ, 2005:
2. Բալասանյան Ս., Մակարենկոն և Սխոմլինսկին երեխաների կոլեկտիվի ստեղծման մասին, Երևան, 1983:
3. Գևորգյան Վ., ՈՒսուցչի հոգեբանական հեռատեսությունները և աշակերտների տարքիային առանձնահատկությունները, Երևան, 2017:
4. Մելքոնյան Տ., Ուսուցիչ-աշակերտ ժամանակակից փոխհարաբերությունները և առաջացող խնդիրները, Հոդված, 2017:
5. Галагузовой М., Гуманит М., социальной педагогики, Хрестоматия-учеб.: Учеб. пособие., изд. центр ВЛАДОС, 2000.
6. Коджаспирова Г., История образования и педагогической мысли: Таблицы, схемы, опорные конспекты: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений.-М Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2003.
7. http://pedlib.ru/Books/1/0221/1_0221-302.shtml
8. https://forum.armedu.am/showthread.php/1626